

ԵՐԱԿՐՈՆԵՅԱՆ ԱՅԿԱԿՄԱՆ

**ՄԱՅՐ ԱԹՈՒ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱՇՆԻ
ԿՐՈՆԱԿԱՆ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ,
ԼՐԱՏՎԱԿԱՆ ԵՐԿՇԱՐԱԹԱԹԵՐԹ**

**Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ
ԿԱԹՈՐԻԿՈՍԻ
ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ
ՈՒՐԵՐՁԸ ՀԱՐԱՆԱԿԻ
ԵՎ ԽԱՂԱՊՈՒԹՅԱՆ
ՏՈՆԻ ԵՎ ՇՈՒՇԻ
ԱՇԱՏԱԳՐՈՒԹՅԱՆ
ՕՐԿԱ ԱՌԻԹՈՎ**

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից հայրապետական Մեր օրինությունն ու շնորհավորանքներն ենք հղում բարեպաշտ մեր ժողովրդին՝ Մայիսի 9-ի՝ Հաղթանակի եւ խաղաղության պանծալի տոնի եւ Շուշիի ազատագրման օրվա առիթով:

Երկրորդ աշխարհամարտում ազգեր ու պետություններ մեծ գոհողությունների գնով հաստատեցին ազատ ու խաղաղ ապրելու իրենց իրավունքը՝ մերժելով բռնությունը եւ ֆաշիզմը: Մեր քաջարի ժողովուրդը նույնպես մասնակից եղավ եւ մեծ նպաստ բերեց մեծ հաղթանակի կերտմանը, որը ոգեղեն աղբյուր դարձավ Շուշին ազատագրող ու Արցախյան ազատամարտին մասնակից մեր զավակների համար:

Փառք եւ գոհություն ենք մատուցում Աստծուն, որ ազգս հայոց ապահովության մեջ պարծանքով ու տոնական խնդրյալով է նշում Խաղաղության եւ հաղթանակի ու Շուշիի ազատագրման տոները: Շուշիի եւ Արցախի ազատագրմամբ, որ ձեռք բերվեց մեր քաջարի զավակների հերոսական պայքարով, մեր նորօրյա պատմության մեջ բացվեց նոր հաղթանակների, նոր կյանքի հուսառատ էջը՝ հաստատելով սուրբգրային խոսքը, թե ովքեր խաղաղություն են ուզում, ուրախ պիտի լինեն (Առակ. ԺԲ 20):

Աղոթելով հանուն հայրենյաց նահատակված մեր հերոս զավակների հոգվոց հանգստության համար՝ հայցում ենք, որ Տերն ամենախնամ Իր Սուրբ Աջով անվրդով, խաղաղության մեջ պահպանի համայն աշխարհը եւ մեր ժողովրդին՝ ի Հայաստան, յԱրցախ եւ ի Սփյուռս:

Մեր Տեր Հիսուս Քրիստոսի շնորհը եւ խաղաղությունը թող լինեն մեզ հետ այսօր եւ միշտ: Ամեն:

Ամենայն Հայոց Կաթողիկոսի ձեռամբ օծվեց Աբովյանի Սբ Հովհաննես Մկրտիչ եկեղեցին



Մայիսի 14-ին, Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հանդիսապետությամբ եւ ներկայությամբ Հայաստանի Հանրապետության նախագահ Սերժ Սարգսյանի եւ Հայաստանում պաշտոնական այցով գտնվող Բելառուսի Հանրապետության նախագահ Ալեքսանդր Լուկաշենկոյի, տեղի ունեցավ Աբովյանի Նորակառույց Սբ Հովհաննես Մկրտիչ եկեղեցու օծման արարողությունը: Եկեղեցին, որի հիմնարկները կատարվել էր 2006-ի օգոստոսի 24-ին, կառուցվել է տիար Գագիկ Ծառուկյանի բարերարությամբ:

Եկեղեցու օծմանը մասնակցում էին բազում հրավիրյալներ՝ Հայ Եկեղեցու թեմակալ առաջնորդներ, ՀՀ ԱԺ ներկայացուցիչներ, ՀՀ կառավարության անդամներ, քաղաքական եւ հասարակական գործիչներ, Գերագույն հոգեւոր խորհրդի անդամներ, Համայն Ռուսիո Պատրիարքի առաջնորդական փոխանորդ, Կոսկրեսենսկի եպս Սավվայի գլխավորած պատվիրակությունը, Անդրկովկասում պապական նվիրակ Նորին Սրբազնություն Մարեկ արք. Սուլչինսկին, ԵՀԽ Բոսնի Էկումենիկ դպրոցի տնօրեն հայր Իուան Սաուկան (Ռումին Ուղղափառ Եկեղեցի):

Նորակառույց եկեղեցու առջեւ Նորին Սրբությանը դիմավորեցին թեմակալ առաջնորդ Առաքել եպս Զարամյանը եւ թեմի հոգեւոր դասը, մարզային ու քաղաքային իշխանությունների ներկայացուցիչները: Ողջույնի արարողությունից հետո Վեհափառ Հայրապետը եկեղեցականների թափորով, օրհնելով հավաքված ժողովրդին, առաջնորդվեց Սբ Հովհաննես Մկրտիչ եկեղեցի, ուր սկսվեց տաճարի օծման հանդիսավոր կարգը:

Սաղմոսերգությանը, աղոթքներին ու շարականներին հաջորդեց օծումը, երբ սբ Խորան բերվեց սրբալույս մյուռնը, որով եւ Նորին Սրբությունն օծեց եկեղեցու սբ Սեղանը: Արարողությանը մասնակից Ֆրանսիայի հայոց թեմի առաջնորդ Նորվան արք. Չաքարյանը, ԱՄՆ հայոց Արեւելյան թեմի առաջնորդ Խաժակ արք. Պարսամյանը, ԱՄՆ հայոց Արեւմտյան թեմի առաջնորդ Հովան արք. Տերտերյանը, Տավուշի թեմի առաջնորդ Եզնիկ արք. Պետրոսյանը, Արարատյան փոխանորդ Նավասարդ արք. Կոնյանը, Մայր Աթոռի վանական խորհրդի նախագահ, հրատարակչական բաժնի տնօրեն Նաթան արք. Հովհաննիսյանը, Վայոց ձորի թեմի առաջնորդ Աբրահամ եպս Մկրտչյանը, Մայր Աթոռ Սբ Էջմիածնի դիվանապետ Արշակ եպս Խաչատրյանը, Եզնիկ արք. Տերտերյանը, Տավուշի թեմի առաջնորդ Եզնիկ արք. Պետրոսյանը, Արարատյան փոխանորդ Նավասարդ արք. Կոնյանը, Մայր Աթոռի վանական խորհրդի նախագահ, հրատարակչական բաժնի տնօրեն Նաթան արք. Հովհաննիսյանը, Վայոց ձորի թեմի առաջնորդ Աբրահամ եպս Մկրտչյանը, Մայր Աթոռ Սբ Էջմիածնի դիվանապետ Արշակ եպս Խաչատրյանը, Եզնիկ արք. Տերտերյանը, Տավուշի թեմի առաջնորդ Եզնիկ արք. Պետրոսյանը, Արարատյան փոխանորդ Նավասարդ արք. Կոնյանը:

արք. Տերտերյանը, Տավուշի թեմի առաջնորդ Եզնիկ արք. Պետրոսյանը, Արարատյան փոխանորդ Նավասարդ արք. Կոնյանը, Մայր Աթոռի վանական խորհրդի նախագահ, հրատարակչական բաժնի տնօրեն Նաթան արք. Հովհաննիսյանը, Վայոց ձորի թեմի առաջնորդ Աբրահամ եպս Մկրտչյանը, Նոր Նախիջեւանի եւ Ռուսաստանի հայոց թեմի առաջնորդ Եզրաս եպս Ներսիսյանը, Հարավային Ռուսաստանի հայոց թեմի առաջնորդ Վազգեն եպս Միրզախանյանը, Մայր Աթոռ Սբ Էջմիածնի դիվանապետ Արշակ եպս Խաչատրյանը, Եզնիկ արք. Տերտերյանը, Տավուշի թեմի առաջնորդ Եզնիկ արք. Պետրոսյանը, Արարատյան փոխանորդ Նավասարդ արք. Կոնյանը:

ավելի ընդարձակվեց ու ճոխացավ: Այսօր այս բարձունքի վրա շքեղակառույց հառնել է Նորակերտ եկեղեցին՝ ի սպասավորություն Աբովյանի եւ շրջակայքի հավատավոր Մեր ժողովրդի:

Եկեղեցու մասին խոսելով՝ առաքյալն ասում է. «Ամբողջ կառույցը Տիրոջով վերածում է մի սուրբ տաճարի, որի մեջ դուք էլ նրա հետ կառուցվում եք որպես բնակարան Աստծու՝ Սուրբ Հոգու միջոցով»: Հավատացելոց համար եկեղեցական կառույցը, ճարտարապետական կոթողից առավել, Աստծո տունն է, որտեղ երկնառաք օրհնությունն ու շնորհներն են բաշխվում հավատացյալներին՝ նրանց դարձնելով տաճար Սուրբ Հոգու: Եկեղեցին ճշմարիտ հավատն է,



տոսի հայոց թեմի առաջնորդ Աշոտ եպս Մնացականյանը, Դամասկոսի հայոց թեմի առաջնորդ Արմաշ եպս Նալբանդյանը, Միջեկեղեցական հարաբերությունների բաժնի տնօրեն, Արթիկի թեմի առաջնորդ Հովակիմ եպս Մանուկյանը, Մայր Աթոռի լուսարարապետ Հովհաննիսյան եպս Հակոբյանն օծեցին եկեղեցու մկրտության ավազանը եւ բոլոր սյուները:

Հավարտ արարողության Ամենայն Հայոց Հայրապետը ներկա ժողովրդին բերեց հայրական իր պատգամն ու օրհնությունը: «...Յոթ տարի առաջ Երկնավորի բարեհաճ կամքով Աբովյան քաղաքի բազմաթիվ հավատավոր Մեր զավակների աղոթական ներկայությամբ կատարեցինք տիար Գագիկ Ծառուկյանի բարերարությամբ կառուցվող սրբազան այս աղոթավայրի հիմնարկեքի արարողությունը: Մեռնահորշմ օծմամբ դրվեցին հիմքերը եկեղեցու, որը շինարարության ընթացքում բարերարի խանդավառ նախաձեռնությամբ

որ միաբանում է մեզ Աստծո Որդու ճանաչողության շնորհի մեջ, ինչպես վկայում է սբ Սահակ Պարթև Կաթողիկոսը: Եկեղեցու նվիրական, սրբազործող հարկի ներքո աստվածաշաշտական արարողությունները, Քրիստոսի կենսատու Ավետարանի քարոզությունը հավատացելոց հաղորդակից են դարձնում Բարձրյալին, զորացնում հավատով, կրթում ու դաստիարակում տերունական պատգամներով, ոգեշնչում քաջ ու բարի գործերի, ճշմարիտ ու արդար ընթացքի եւ պարզեւում հույս ու զորություն՝ վերագարթոնքի եւ լուսավոր գալիքի: Դարերի հոլովության մեր ժողովուրդն անցել է բազում նեղությունների ու տառապանքների, ջարդերի ու կոտորածների միջով, սակայն երբեք չի վիատվել եւ հույսով, հավատքով ու աղոթքով հաղթականորեն վեր է հառնել ամեն փորձությունից՝ ամենուր եկեղեցի ու դպրոց կառուցելով, կազմակերպելով ազգային-եկեղեցական իր կյանքը:

Շարունակությունը՝ էջ 3



ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՎԵՇԱՐԱՆՈՒՄ

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց

30 ապրիլի

Եվրոպական խորհրդարանի ղախողանողականների ու ռեֆորմիստների խմբի ղախզամավորներին



Ն. Ս. Օ. Տ. Տ. Գաբրիել Բ Շայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Եվրոպական խոր-

հրդարանի պահպանողականների եւ ռեֆորմիստների խմբի պատգամավորների պատվիրակությանը՝ ուղեկցությամբ ՀՀ ԱԺ պատգամավոր Ալեքսանդր Արզումանյանին:

Հանդիպմանն Ամենայն Հայոց Կաթողիկոսը կարեւորեց նման այցելությունները, որոնք նպաստում են Եւ-Հայաստան կապերի ամրապնդմանը: Վեհափառ Հայրապետն իր գնահատանքը հայտնեց պատգամավորներին այն ջանքերի համար, որ ներդրվում են Հայաստանի եվրոփայնացման ճանապարհին:

Նորին Սրբությունը նաեւ պատասխանեց հյուրերի հարցերին, որոնք հիմնականում առնչվում էին Հայ Եկեղեցու հարաբերություններին քույր Եկեղեցիների հետ, տարածաշրջանում խաղաղության հաստատմանն ուղղված հոգեւոր առաջնորդների ջանքերին եւ հասարակության կյանքում կրոնի եւ հոգեւոր արժեքների դերակատարությանը:

ԵՎԼՕՖ հիմնադրամի գլխավոր նստենին

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց ԵՎԼՕՖ միջազգային գլխավոր տնօրէն Փաթ Գլխունին՝ հայաստանյան ԵՎԼՕՖ հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի նախագահ Տաթև արք. Սարգսյանի եւ հիմնադրամի գլխավոր տնօրէն Տիգրան Հովհաննիսյանի ուղեկցությամբ:

Ողջունելով ԵՎԼՕՖ-ի գլխավոր տնօրէնի այցը Մայր Աթոռ՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսը գոհունակություն հայտնեց հայաստանյան ԵՎԼՕՖ հիմնադրամի գործունեության եւ ԵՎԼՕՖ միջազգային կողմից վերջինիս ցուցաբերվող աջակցության համար: Անդրադառնալով Հայաստանի ներկա սոցիալ-տնտեսական իրավիճակին՝ Վեհափառ Հայրապետն ընդգծեց, որ հիմնադրամն իր գյուղատնտեսական ու կրթական ծրագրերով հնարավորություն է ընձեռում անհատներին եւ համայնքներին՝ հաղթահարելու իրենց առջեւ ծառացած զանազան խնդիրները: Նորին Սրբությունը նաեւ նշեց, որ հիմնադրամը բարենպաստ ներդրում ունի միջեկեղեցական հարաբերություններում:

Հանդիպման ընթացքում անդրադարձ կատարվեց տա-



րածաշրջանի խնդիրներին ու մարտահրավերներին, Լեռնային Ղարաբաղի խաղաղ կարգավորման գործընթացին:

Վերջում Ամենայն Հայոց Կաթողիկոսը հաջողություններ մաղթեց տիար Գլխունին՝ հայաստանյան ԵՎԼՕՖ-ի ղեկավարության հետ ԵՎԼՕՖ ունիվերսալ վարկային կազմակերպության նոր ռազմավարության մշակման գործում:

15 մայիսի

ՀՀ դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության աշխատակիցներին



Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց ՀՀ դատական ակտերի հարկադիր կատարում ապահովող ծառայության աշխատակիցներին եւ այլ երկրների համանուն ծառայությունների ներկայացուցիչներին՝ գլխավորությամբ Հայաստանի գլխավոր հարկադիր կատարող, արդարադատության գեներալ-մայոր Միհրան Պողոսյանի:

գրույցի մեջ անդրադարձավ նաեւ Հայ Եկեղեցու պատմական առաքելությանը ժողովրդի կյանքում, հասարակության մեջ քրիստոնեական արժեքների առավել ամրապնդման անհրաժեշտությանը:

Հանդիպմանը ներկա էր Մայր Աթոռի դիվանապետ Արշակ եպս Խաչատրյանը:

ՌՈՒՄ ԵՒ ՌՈՒՄԻՆ ՈՒՂՈՎՓԻԱՌ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱԳՈՒՑԻՉՆԵՐԻՆ

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Համայն Ռուսիո Պատրիարքի՝ Մոսկվայի թեմի պատրիարքական տեղապահ, Նովոսպասյան հայրապետական վանքի վանահայր Վոսկրեսենսկի եպս Սավվային եւ Եկեղեցիների համաշխարհային խորհրդի՝ Բոսնի Էկումենիկ դպրոցի տնօրէն հայր Իւան Սաուկային (Ռումին Ուղղափառ Եկեղեցի), ովքեր Հայաստան էին ժամանել Արմավիրի Ս. Հովհաննես Մկրտիչ Եկեղեցու օծման առիթով:

Հանդիպմանը Նորին Սրբությունը, իր օրհնությունն ու բարեմաղթանքները բերելով քույր Եկեղեցիների ներկայացուցիչներին, ուրախություն հայտնեց համայն հայության հոգեւոր կենտրոն նրանց այցի առիթով: Վեհափառ Հայրապետը գոհունակությամբ նշեց, որ Հայ Եկեղեցու հարաբերությունները Ռուս եւ Ռումին Ուղղափառ Եկեղեցիների, ինչպէս նաեւ Եկեղեցիների համաշխարհային խոր-



հրդի կառույցների հետ հատկանշվում են յուրահատուկ ջերմությամբ եւ գործակցության ոգով:

Շարունակությունը՝ էջ 3

«Ասպետ Սուրբ Էջմիածնի» տիտղոս եւ հայրապետական շքանշան՝ ազգային բարերար Նազար Նազարյանին



Ամերիկայի Միացյալ Նահանգների հայոց Արեւելյան թեմ կատարած հայրապետական այցի ընթացքում՝ մայիսի 10-ին, Ն. Ս. Օ. Տ. Տ. Գաբրիել Բ Շայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը ներկա գտնվեց ԱՄՆ հայոց Արեւելյան թեմի եւ Հայկական բարեգործական ընդհանուր միության կողմից կազմակերպված հոգաբարձուների խորհրդի անդամ, ազգային բարերար տիար Նազար Նազարյանի մեծարման հանդիսությամբ:

Հանդիսության ընթացքում Ամենայն Հայոց Կաթողիկոսն իր օրհնությունը բերեց տիար Նազարյանին եւ նրան շնորհեց «Ասպետ Սուրբ Էջմիածնի» տիտղոս եւ հայրապետական շքանշան՝ ի գնահատություն աստվածակառույց Սբ Էջմիածնի հավետ պայծառությանը որդիական սիրով ու նախանձախնդրությամբ բերած բացառիկ ավանդի ու աստվածահաճո ծառայությունների: «Մենք այսօր եկել ենք Ձեզ հետ միասին գոհաբանություն բարձրացնելու առ Աստված, որ ազգիս պարգևում է այսպիսի արժանավոր զավակներ, որոնք ապրում են իրենց կյանքը նվիրումով. նվիրումով երեք հիմնական արժեքների՝ ընտանիք, Հայրենիք եւ Եկեղեցի: Նազար եւ Արտեմիս Նազարյանների կյանքը բնորոշվում է այս երեք արժեքների ընդգրկումով մեջ. ընտանեասիրություն, հայրենասիրություն եւ եկեղեցանվիրում: ...Բարի գործը, ավետարանի խոսքի համաձայն, նման է ցորենի հատիկի, որ ընկնելով հողի մեջ՝ չի կորչում, չի վերանում, չի անհետանում, այլ բազմապատկերվում է: ...Մենք այսօր տեսնում ենք մեր արագի արժանավոր զավակների բարեգործությունների բազմապատկի արդյունքները, որ են շեն ու ծաղկող ազգային կյանք Սփյուռքի մեջ, ազատ ու անկախ հայրենի երկիր եւ պայծառացյալ Եկեղեցի: Հայցում ենք, որ Տերը միշտ վառ պահի Ձեր հոգիներում ընտանեասիրությունը, հայրենասիրությունը եւ եկեղեցանվիրումի զգացումը, որոնցով պիտի շարունակի հարատեւել մեր ժողովուրդը դեպի իր կյանքի նոր հորիզոններ, դեպի նոր հազարամյակներ իր կյանքի»,- օրհնության ու գնահատանքի իր խոսքում նշեց Վեհափառ Հայրապետը:

Տիար Նազար Նազարյանն իր սրտաբուխ նվիրատվություններով շարունակ նպաստել է Սփյուռքի համայնքային, կրթական-սոցիալական ծրագրերին, միշտ եղել է հայապահպանության ջատագով ու քարոզիչը: 1962 թ. ի վեր Լիբանանում գործում է Նազարյան դպրոցը, կառուցվել են սրահներ՝ Բուենոս Այրեսի ՀԲԸՄ կենտրոնի, Կալիֆոռնիայի ՀԲԸՄ Մանուկյան-Դեմիրճյան դպրոցի, Նյու Յորքի «Նուբար» ճամբարի համար: Նազարյան ընտանիքը կարելու իր նպաստն է բերել Նյու Ջերսիի Սբ Թովմաս Եկեղեցու կառուցմանը, հաստատել է հատուկ հիմնադրամ, որը կրթաթոշակներ է ապահովում բարձրագույն ուսում ստացող հայ ուսանողների համար, աջակցել է Սփյուռքի տարբեր ազգապահպան ծրագրերի իրագործմանը:

1988 թ. սոսկալի երկրաշարժի օրերից սկսյալ Նազարյան ընտանիքը սատար կանգնեց նաեւ հայրենիքին՝ հատկապես ՀԲԸՄ կողմից իրագործվող բազմաթիվ ծրագրերի միջոցով գորակցելով նորանկախ Հայաստանի առաջընթացին, շինությանն ու պայծառությանը: Կարելու իրագործումներից էր Լիբանանում ՀՀ դեսպանատան համար շենքի կառուցումը եւ ընծայումը հայրենիքին, Ջեֆերսոնի անվան գերձայնային հետազոտությունների եւ կրթության ինստիտուտի հետ համատեղ ստեղծված գերձայնային հետազոտությունների կենտրոնի եւ Երեւանի Մխիթար Հերացու անվան բժշկական համալսարանի ծառայության խիստորոշման եւ բուժման ՀԲԸՄ-ԵՊԲՀ «Լեւոն եւ Կլաուդիա Նազարյան» ռադիոլոգիայի կենտրոնի հիմնումը: Նազարյան բարերարների հովանավորությամբ Երեւանում այժմ կառուցվում է ՀԲԸՄ հայաստանյան նոր գրասենյակը:

Ազգասեր ու եկեղեցաշեն բարերարները մշտապես սատարել են Մայր Աթոռ Ս. Էջմիածնին եւ Հայոց Եկեղեցուն: Նազար եւ Արտեմիս Նազարյանների ազնիվ բարերարությամբ Հայաստանում քրիստոնեությունը պետական կրոն հռչակման 1700-ամյակի առիթով կառուցվեց Երեւանի Ս. Գրիգոր Լուսավորիչ մայր եկեղեցու Ս. Տրդատ մատուռը: Նազարյան ընտանիքի առատաձեռն ընծայաբերումներով Մայր Աթոռում 2002 թ. հիմնանորոգվեց Ղազարապատի սարկավազների թաղը եւ միաբանական սեղանատունը, իսկ 2008 թ. կառուցվեց դիվանատան շենքը: Հավատավոր Նազարյան ամուսիններն այսօր էլ շարունակում են զորավիգ լինել Ամենայն Հայոց Կաթողիկոսին եւ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի կրթական, սոցիալական ու հայապահպան առաքելությանը:

ՀԱՅՈՑ ԿԱԹՈՒՄԿՈՍՆԵՐ

ՄԻՄԵՈՆ Ա ԵՐԵՎԱՆԴԻ (1763-1780)

Սկիզբը՝ թիվ 7-8

Միմեոն Երեւանցու հայրապետական գործունեության սկսվելով էլ՝ իր ավարտը գտավ Նալբանդի պատրիարքական գործունեությունը: Նա ընդամենը 62 տարեկան էր, սակայն մաշարայական կոչված հիվանդությունն սկսեց նրան հյուսել: Հավանաբար նա թոքախտ էր, կամ այդպես խիստ նիհարելը սրտի արատի հետեւանք էր: Նրան չօգնեցին օդափոխությունները: Նա տեղափոխվեց Սկյուտարի երուսաղէմատուն եւ երբեմն ձիով էր շրջում՝ առողջանալու հույս ունենալով: 1764 թվի ապրիլի 11-ի զատկական պատարագը նա հագնված կատարեց: Գրիգոր Բասմաջյանի վկայությամբ՝ արարողությունը գրեթե նշանակալից մասով իրենք են արել: Նա շարունակեց ձիավարությամբ զբաղվել, բայց օրերից մի օր չկարողացավ ձիու վրա մնալ, ուստի նրան բերեցին վանք ու անկողին դրին: Չգացվեց նոր պատրիարքի ընտրության կարիքը: Նալբանդի հավանություն տվեց ավագանու որոշմանը եւ որպես իր հաջորդ նշեց Սամվել Երզնկացի Եպիսկոպոսին, որը Պրուսայի առաջնորդն էր: Սակայն վերջինս համառորեն հրաժարվեց դրանից՝ չուզելով Պրուսան թողնել եւ պատրիարքական բեռն տակ մտնել: Սարգիս Սարաֆյանն իր ներքողականում նշում է, թե Սամվելից առաջ Նալբանդի իրեն է առաջարկել ընդունել ապատրիարքությունը, սակայն ինքը մերժել է: Այս հայտարարությունը, թերեւս, չափազանց կասկածելի է: Սարգիս՝ Փրանսիայի եւ Նեապոլի դեսպաններին վկայակոչելով լույս ցույց է տալիս նրա՝ հռոմեացիականությանը ծածուկ հարելը: Իսկ ժողովուրդը նրան մշտապես կասկածում էր: Եվ նրա թեկնածու-


թյան մասին ոչինչ չի ասվում: Ի վերջո, ընտրությունը կանգ առավ Բասմաջյանի վրա: Ծիշտ է, նա փորձեց խուսափել՝ պատճառաբանելով, թե վարդապետ է, իսկ Կ. Պոլսում 12 եպիսկոպոս կա, սակայն նրան հարկադրեցին՝ հիշելով, որ Կոլոտը եւս հովվապետել է՝ լինելով վարդապետ:

1764 թվի մայիսի 13-ին Կ. Պոլսում պատրիարքական Մայր եկեղեցում, հրավիրվեց մեծ ժողով, որին մասնակցեց ավելի քան 1000 մարդ, իսկ Նալբանդի պատգարակով բերեցին: Նա հոժարակամ հրաժարվեց պատրիարքությունից՝ հիվանդության պատճառով, եւ Գրիգոր Բասմաջյանն ընտրվեց պատրիարք: Նալբանդի նրան հանձնեց իր մատանին եւ գավազանը եւ գնաց Գում-Գափուի երուսաղէմատուն: Մուսթաֆա Գ սուլթանը զարմացել էր Նալբանդի կամավոր հրաժարականից եւ պաշտոնյաներ էր ուղարկել, որ Նալբանդի որոշումն անձամբ լսեն, քանի որ վախենում էր խաբեությունից: Մայիսի 15-ին Գրիգոր Բասմաջյանը գնաց արքունի դուռ, որտեղ նրան արքունական խալաթ հագցրին, իսկ մայիսի 16-ին Մայր եկեղեցում խոսեց իր առաջին քարոզը: Նա շնորհակալություն հայտնեց նախորդ պատրիարքին, ազգին ու թագավորությանը: Մայիսի 17-ին Նալբանդ գնաց Սկյուտարի վանք, իսկ Բասմաջյանը շարունակեց իր գործունեությունը:

Հրաժարականից հետո Նալբանդ ապրեց ընդամենը երկու ամիս: Նա բաժանեց իր ժառանգությունը Աթոռին ու վանքերին, հոգեւորականներին ու աղքատներին: Իր ունեցած դրամական կարողությունը նա կարգադրեց շահեցնել եւ շահույթի մի մասը հատկացնել որբ ու աղքատ աղջկաներին՝ հոգալու իրենց ամուսնության ծախ-

սերը: Շահույթի մի մասն էլ նա տվեց աղքատ ու որբ մանուկներին, որ ձրի ուսում ստանան: Երրորդ մասը նախատեսեց Սկյուտարի աղքատներին ջուր հասցնելու համար, բայց այդ աշխատանքը կատարվեց նրա հաջորդի օրը: Իր ունեցած գրքերը պարգևեց Գում-Գափուի պատրիարքական եկեղեցուն: Դա եղել է Մայր եկեղեցու գրադարանի գլխավոր հարստությունը: Հիրավի, արդյունավոր եղավ Նալբանդի պատրիարքական գործունեությունը: Նա շատ երկասիրություններ հրատարակեց ու ունեցավ շատ աշակերտներ, որոնցից էին վարդապետներ Աթանասը, Հովսեփը, Սահակը կամ Դեռնոնը, Կարապետ Բեքյուրօղլուն, Ստեփան Բեյօղլուցին, Հովհաննես Խոյեցին, Բարսեղը, Գրիգոր Տիվրիցին, Սարգիս Կեսարացին եւ Միքայելը, սարկավագներ Գաբրիելը կամ Բադասարը, Մխիթարը կամ Գեւորգը, Մադաթ Բալաթցին, Մելքիսեդ Բալաթցին, Արսեն Լանկացին եւ Գրիգոր Բալաթցին:

Նալբանդի ժամանակներում թույլ չտվեց մեծ հուզումներ, եւ հռոմեացիականների դեմ հալածանքներ տեղի չունեցան: Նա շարունակեց Կոլոտի խոհեմ քաղաքականությունը եւ անիմաստ խստություններ չբանեցրեց: Նրա գործունեությունը, իհարկե, թույլ եւ զիջողական էլ չէր եւ ուղղված էր կաթոլիկամետների ազդեցությունը թուլացնելուն, նրանց քարոզչության արդյունավետությունը խափանելուն: Տեսնելով, որ լատինամետները գայթակղվում են ուսմամբ, կրթական նրբություններով ու հրատարակություններով, Նալբանդ նրանց դեմ պայքարեց նույն գեղերով: Նրա գրեթե բոլոր երկասիրությունները նվիրված էին հայադավանության պաշտպանությանը եւ լատինականության սխալ եւ անհիմն լինելուն: Դա շատ ազդեցիկ եղավ, որովհետեւ Հայոց եկեղեցու ջատագովներն իրենց ձեռքին փաստեր ունեցան՝ իրենց եկեղեցին պախարակողների դեմ: Փաստորեն, նա Հովհանն Դրոմենցուն ու Գրիգոր Տաթևացուն հետո այն բազմաթիվ վարդապետներից էր, որի անունը հիշվում է: Նա կարողացավ իր շուրջը պահել անգամ այնպիսի



երկերեսանի հոգեւորականների, ինչպիսին էր Սարգիս Սարաֆյանը, որոնք արտաքինապես հայադավանության պաշտպաններ էին, իսկ ծածկաբար հակված էին դեպի հռոմեացիականությունը: Սարաֆյանն իր ներքողականում խոսում է այն մասին, թե իբր հորդորել է Նալբանդի հռոմեացիականության, սակայն դա ընդամենը Սարաֆյանի՝ ավելի ուշ կատարած մերկապարանոց հայտարարությունն էր: Եթե նույնիսկ խոսակցությունն եղել էր, ապա Նալբանդ արժանի պատասխան էր տվել:

Նալբանդ մահացավ Վարդավառի երկրորդ օրը՝ հուլիսի 19-ին՝ երեկոյան ժամը 11-ին, Գում-Գափուի երուսաղէմատունը: Գերեզմանաքարի վրա, որ գտնվում է Բանկալթի գերեզմանատանը, գրված է՝ հուլիսի 20: Հուլարկավորությունը կատարվեց մեծ հանդիսությամբ՝ հուլիսի 20-ին: Մայր եկեղեցուց նրա մարմինը տարվեց եւ հողին հանձնվեց Բեկօղլու թաղի գերեզմանատանը՝ Հակոբ Դ Ջուղայեցու գերեզմանի հարեւանությամբ: Հուլարկավորությունը գլխավորեց Գրիգոր պատրիարքը՝ պաշտոնի բերումով: Դրան մասնակցեցին Կ. Պոլսի 12 եպիսկոպոսները, որոնք կատարեցին, պատրիարքի թույլտվությամբ, բոլոր արարողությունները:


Շարունակությունը՝ էջ 5

Ամենայն Հայոց Կաթողիկոսի ձեռամբ օծվեց Արովյանի Սբ Հովհաննես Մկրտիչ եկեղեցին

Սկիզբը՝ էջ 1

Ինչպիսին էլ եղել են ժամանակները, անգամ օտարների տիրապետության ժամը լծի ներքո փորձությունների ու նեղությունների մեջ չի սասանվել եկեղեցի կառուցելու նախանձախնդրությունը մեր ժողովրդի, քանզի թեեւ թշնամյաց կողմից ավերվել են մեր աղոթավայրերը, ոտնակոխ արվել մեր սրբավայրերը, սակայն միշտ կանգուն ու անսասան, անառիկ ու անկործանելի է մնացել մեր հոգու տաճարը, ուր ակնելի հնչել է փառաբանությունը Բարձրյալն Աստծո: Եկեղեցին Աստծո պարգևն է, որ Բարձրյալը շնորհում է հավատավոր ժողովրդին՝ մարդկանց միջոցով: Նրա հիմքերը դրված են անսասան վեմի հաստատության վրա. ոչ մարդիկ կարող են այն շարժել, եւ ոչ հրեշտակները՝ սասանել, ասում է սբ Եղիշե պատմիչը: Մեր պատմության մեջ շարունակական եկեղեցաշինությունը վկայություն է մեր ժողովրդի հոգեւոր տաճարի ամրության, նրա ստեղծարար, աննկուն ոգու՝ հիմնված առ Զրիստոս գործել հավատքի վրա, որով հարատեւ պիտի ապրի մեր ժողովուրդը եւ առաջնորդվի դեպի փրկություն, որ Տիրոջից շնորհված է եկեղեցու միջոցով:

Միրելի՝ հավատավոր գավակներ, նորակառույց Սբ Հովհաննես եկեղեցին մեզ հրավիրում է աղոթքի եւ Բարձրյալին փառաբանության՝ պատմելով մեր պատմության եւ մեր սբ հայրերի մասին, հիշեցնելով մեր անցյալը, մեր նախնայաց ավանդները, ձեռքբերումները, որոնցով պարտավոր ենք արժեւորել մեր ներկան եւ կերտել գալիքը: Այստեղ են պատկերները սբ Մեսրոպ Մաշտոցի եւ սբ Սահակ Պարթևի, նրանց աշակերտների, Հայ եկեղեցու մեծ վարդապետների, երախտարժան գործիչների, ովքեր նախանձախնդրի ջանքերով խնամել ու հոգացել են, որ միշտ վառ մնա հայոց հավատքի ջահը՝ գորացնելով հոգեւոր կենսական ուժերը մեր ժողովրդի, որպեսզի ազգս հայոց պայծառացնի իր կյանքն ու հայրենիքը՝ անվարան հետեւելով մեր Տեր Հիսուս Զրիստոսին, Ով կենարար լույսն է աշխարհի (Հովհ. 8.12)...»,- նշեց Վեհափառ Հայրապետը՝ պատգամելով ժողովրդին բարեպաշտ ներկայությամբ, ջերմագին աղոթքով նորակառույց եկեղեցին դարձնել հավատքի պայ-



ծառությամբ լեցուն Աստծո տուն:

Իր խոսքում Ամենայն Հայոց Կաթողիկոսը ողջունեց Հայաստանի Հանրապետության նախագահ Սերժ Սարգսյանի եւ Բեյառնուի Հանրապետության նախագահ Ալեքսանդր Լուկաշենկոյի, ինչպես նաեւ պատվավոր հյուրերի, ընկերների եւ Հայաստանում հավատարմագրված դիվանագիտական առաքելությունների ներկայացուցիչների ներկայությունը հոգեպարար այս արարողությանը՝ մաղթելով, որ Բարձրյալի օրհնությամբ նորանոր ձեռքբերումներով արդյունավորվեն եղբայրական կապերը եւ փոխհամագործակցությունը եկեղեցիների եւ պետությունների՝ ի խնդիր մարդկության խաղաղ, բարօր ու առաջընթաց կյանքի:

Նորին Սրբությունը նաեւ իր բարձր գնահատանքն ու օրհնությունը բերեց եկեղեցու բարեպարին ու նրա ընտանիքին՝ հայցելով սբ Հովհաննես Մկրտչի պահպանությունը նրանց ըն-

տանիքին եւ բոլոր այն անձանց, որոնց ջանքերով հնարավոր եղավ Սբ Հովհաննես եկեղեցու կառուցումը:

Այս առիթով հայրապետական իր գնահատանքը հայտնելով թեմի հոգեւոր դասին՝ Վեհափառ Հայրապետը երկարամյա գովարժան գործունեության համար Առաքել սրբազանին շնորհեց արքայական պատիվ՝ մաղթելով նրան անվազ եռանդ եւ նորանոր հաջողություններ՝ առաջնորդական պատասխանատու առաքելության մեջ:

Վերջում նորակառույց եկեղեցուն Ամենայն Հայոց Կաթողիկոսը փոխանցեց Մայր Աթոռից բերված սբ Հովհաննես Մկրտչի մատուցած: Նախորդ օրը Մայր Աթոռ Սբ Էջմիածնում հատուկ արարողությամբ՝ Մայր Աթոռի մասանց պախարանում պահվող սբ Հովհաննես Մկրտչի մատուցած ամփոփող մատուցարանից հանվեց սրբի ոսկորից մի փոքր հատված եւ սաղմոսների ու շարականների երգեցողության ներքո, ներկայությամբ եկեղեցու բարերարի ընտանիքի, գետեղվեց նորակառույց եկեղեցու համար պատրաստված խաչ-մատուցարանի մեջ:

Արարողությունն ավարտվեց «Պահպանիչ» աղոթքով: Մատուցակիր գեղեցկագարդ խաչով օրհնելով արարողության մասնակիցներին՝ Նորին Սրբությունը մաղթեց, որ սբ Հովհաննես Մկրտչի բարեխոսությունն առ մեր Տերը օգնական լինի համայն հայ ժողովրդին, հաստատի արդար ու բարի գործերի մեջ եւ պարգևի շնորհը՝ մշտապես հավատարիմ մնալու հայրերի սուրբ հավատքին ու ավանդներին:

Օծման արարողությունից հետո եկեղեցում մատուցվեց առաջին սբ Պատարագը: Պատարագին էր թեմակալ առաջնորդ Առաքել արք. Զարամյանը:

50 մետր բարձրություն ունեցող շքեղակառույց տաճարի ճարտարապետն Արտակ Դուլյանն է, նախագծի կոնստրուկտորները՝ Հովհաննես Մեյրոյանն ու Տիգրան Դադայանը: Որմնակարների հեղինակներն են հայր եւ որդի Աբրահամ ու Հայկ Ազարյանները: Եկեղեցու քանդակագործման աշխատանքներին մասնակցել են շուրջ 40 քանդակագործ եւ զարդագործ վարպետ:

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՎԵՉԱՐԱՆՈՒՄ

Սկիզբը՝ էջ 2

Խոսվեց Ռուսաստանի Դաշնության Ռուսիայում հազարամյակների պատմություն ունեցող հայ համայնքների ազգային-մշակութային կյանքի մասին, ընդգծվեց հայրդիների կարեւոր ներդրումը Ռուսաստանի եւ Ռուսիայի կյանքում:

Նորին Սրբությունը նաեւ անդրադարձավ եկեղեցաշինությանը, հոգեւորականների պատրաստման անհրաժեշտությանը, հայ ժողովրդի հոգեւոր կյանքի ու հավատքի, ազգային սրբությունների ու արժեքների նկատմամբ ունեցած հավատարմությանը:

Ապա Սավվա Եպիսկոպոսն Ամենայն Հայոց Կաթողիկոսին փոխանցեց Մոսկվայի եւ Համայն Ռուսիո Կիրիլ Ա Պատրիարքի ողջույներն ու բարեմաղթանքները: Եպիսկոպոսն իր ջերմ տպավորությունները կիսեց Սեւանի Վազգենյան դպրանոց կատարած այցելությունից: Բոսնի Էկումենիկ դպրոցի տնօրեն հայր Իուան Սաուկան եւս իր ուրախությունն արտահայտեց Հայաստան այցի առիթով՝ նշելով, որ Բոսնի Էկումենիկ դպրոցը պատրաստ է շարունակելու հյուրընկալել հայ եկեղեցականների:

Հանդիպմանը ներկա էին Մայր Աթոռի միջեկեղեցական հարաբերությունների բաժնի տնօրեն եւ Արթիկի թեմի առաջնորդ Հովակիմ եպս Մաունկյանը եւ Ծիսահայեցակարգային գրասենյակի պատասխանատու Չաքարիա վրդ. Բաղումյանը:

Նույն օրը հայր Իուան Սաուկան Գեւորգյան հոգեւոր ճեմարանում հանդես եկավ «Էկումենիզմ եւ ուղղափառություն» թեմայով դասախոսությամբ:

Ա

բու Ալի ալ-Մուխասսին աթ-Թանահին (940, Բասրա - 994, Բաղդադ) արաբական դասական արձակի ակնարկոր դեմքերից է՝ միանգամայն ուրույն ստեղծագործական դիմանկարով:

Արեւելցիներն ընդհանրապես եւ արաբները մասնավորաբար ի սկզբանէ հակված էին զարմանահրաշ գրույցների, հեքիաթների, պատմությունների: Ուշ միջնադարում արաբական աշխարհի թափանցեցին հնդիրանական բանահյուսության շատ նմուշներ, որ վերամշակվեցին ըստ տեղական ըմբռումների ու ճաշակի: Այդ շարքում առանձնակի տեղ ունեն «Ջագար ու մի գիշերները», որ իրավամբ համարել են Արեւելքի հանրագիտարան, որովհետեւ հրաշապատումների կողքին կան նաեւ կենսական հենքով ճշմարտացի կերպարներ՝ ծախու պաշտոնյաներ ու դատավորներ, շեղված հոգեւորականներ, մանր ու խոշոր ավագակներ, բանասերկուկանայք: Կերպարներ՝ օժտված խորամանկությամբ ու նենգությամբ, խալիֆների, սուլթանների անսահմանափակ իշխանության բազում պատկերներ, եւ վերջապես՝ բարոյական դասեր ու իմաստասիրական խոկմունք, գործնական եզրահանգումներ ու խորհուրդներ: Այս կարգի հեքիաթներից ու գրույցներից ոչ պակաս փնտրված էր առակը, որ դարձյալ մեծ մասով թարգման



նում կամ փոխադրում էին պարսկերենից:

Աթ-Թանահին գրական ասպարեզ մտավ մի դարաշրջանում, երբ խալիֆաթը թուլացել, մասնատվում էր, եւ ընդհանրապէս՝ անսխալընթաց վերելք էր ապրում մշակույթը: Բաղդադում, ապա Ղազվեյում, Դամասկոսում եւ այլուր զարգացան գիտությունն ու արվեստը, ստեղծվեցին հարուստ ձեռագրատներ, բացվեցին

ուսումնական հաստատություններ: Չափազանց էին դառնում մտավոր գործիչների այն հանդիպումները, հյուրասիրությունները, երբ քննարկվում էին այլեւայլ ընթացիկ կամ պատմական հարցեր, գիտական ու բարոյական խնդիրներ: Գեղարվեստական երկնայթերք, ասմունք, երաժշտություն՝ հատուկ էին ոչ միայն «վերնախավին»: Ամենասովորական հավաքույթներում, բաղնիքում,

խոհակերանոցում, մենաստաններում, գինետներում, ամենուրեք պատմվում էին անցած ու ժամանակակից դիպվածներ, գրույցներ, անեկդոտներ: Չգալով այդ կարգի պատմության կարեւորությունը՝ աթ-Թանահին որոշում է մոռացումից փրկելու համար գրի առնել որքան կարող է եւ շուրջ քսան տարի հետեւողականորեն հավաքում, կազմում է գրույցների ու նորավեպերի իր ժողովածուն՝ ավելի քան 10 հատոր, որ, սակայն, ամբողջովին չի պահպանվել: Նա լավ է գիտակցել իր կատարածի արժեքը եւ առաջաբանում գրել է. «Հուսով եմ, որ ժողովածուն կունենա իր ընթերցողը, եւ որ ես իզուր չեմ աշխատել ու հոգնել՝ գրառելով այս ամենը: Դա այդպես է, եթե նույնիսկ իմ գործին նախապատվություն տրվի ընդամենը թղթի մաքուր էջի համեմատ»: Հետագա սերունդները հասկացել եւ գնահատել են նրա գործը. նրա ժառանգության պահպանված մասը մեծ ուշադրության է արժանացել ոչ միայն իրենց՝ արաբների շրջանում. նոր ժամանակներում նրա երկերը թարգմանվել են եվրոպական մի շարք լեզուներ:

Հեղինակը ժողովածուն մասերի չի բաժանել, չի օժտել խորագրերով՝ նկատի ունենալով, որ գրույցները բազմազեղ են եւ մեկ

որոշակի տիպի վերագրելը կարող է շեղել ընթերցողի ուշադրությունը, ապակողմնորոշել նրան, խանգարել ազատ ընկալմանը: «Չրուցակիցների ուշագրավ պատմածներից» նա ընտրել է առավել հետաքրքրականները, որ հասարակության բոլոր շերտերի կենցաղից, կյանքից պոկված պատանիներ են, դիպաշարեր՝ առանց գեղարվեստական պաճուճանքի, առանց այլաբանության, ընդհանրացումների, վերացարկման, առանց գրական հնարանքի: Այս հանգամանքը բարձրացնում է պատմվածի կենսական հավաստիությունը՝ միաժամանակ լինելով պատրաստի ատաղձ ազգագրության, ընկերային-տնտեսական հարաբերություններ ուսումնասիրողի համար: Այստեղ ամեն ինչ երկային է, հողաբույր, կենցաղային: «Մշտապես հանդիպելով արժանավոր, կիրթ մարդկանց, որ ծանոթ են թագավորությունների տարեգրությանը, ճանաչում են ժողովուրդների գովարժան որակներն ու արատները, բարի գործերն ու թերությունները... ես նրանցից լսել եմ բազում պատմություններ թագավորների ու խալիֆների, գողերի ու ավագանների, զորավարների ու էմիրների մասին, բարձրաստիճան մարդկանց, հարկահավաքման, բանական մարդկանց մասին... զվարճասերների, հարեցողների, երգչուհիների ու երգիչների... ամեն տիպի ու շերտի մարդկանց», գրել է նա գրքի առաջաբանում:

Շարունակությունը՝ էջ 7

ՄԵՐ ԴՊՐՈՑԻ ՀՈԳԵՎՈՐ ԱՌՈՐՅԱՆ

Բոլորիս կյանքում կան մնայուն արժեքներ, որոնք մեզ ուղեկցում են Աստծու կողմից նախանշված եւ մեր կողմից անցնելիք ամբողջ ճանապարհի ընթացքում: Այդ արժեքներից, թերեւս, ամենագլխավորը հոգեւոր գիտելիքն է՝ ճանաչողական ու զարգացնող: Եվ այս ամենի ձեռք բերման կարեւոր օրրանը դպրոցն է, ուր իշխում են բարին

րոց էր այցելել Ամժելա Ղլեյանը, ով դասալուսման արդյունքները քննարկելիս՝ իր խրատներով ու խորհուրդներով մշտապես աջակցում եւ նպաստում է հայրենիքի, ազգային արժեքների, Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու հանդեպ սիրո եւ նվիրվածության, քրիստոնեական կենսակերպի ամրապնդմանը՝ ամեն անգամ խոսելով քրիստոնեա-

բարի երթ մարդեց նաեւ դպրոցի շրջանավարտներին: Ապա Պահպանիչ աղոթքով օրհնեց բոլոր ներկաներին:

Կրթօջախի օրհնության կարգից հետո Ամժելա Ղլեյանը տնօրինությանը հանձնեց Մայր Աթոռ Սբ Էջմիածնի ԶԴԿ-ի կողմից տրված պատվոգիրը եւ խրախուսական այլ նվերներ՝ «Գրից մինչեւ գիրք» հանրապետական մրցույթին դպրոցի մասնակցության համար: Նա իր ելույթում անդրադարձավ նաեւ դպրոցի 11-րդ դասարանի աշակերտուհի Օֆելյա Սարգսյանի հաջողություններին, ով երեք տարի անընդմեջ մասնակցում է Հայոց Եկեղեցու պատմություն առարկայի օլիմպիադայի հանրապետական փուլին: Նա այս տարի մասնակցեց Երեւանի պետական համալսարանի կողմից կազմակերպված օլիմպիադային եւ կրկին ցուցաբերեց խոր գիտելիքներ:

Վերջում բոլորը միասնաբար աղոթեցին երկրի խաղաղության, ժողովրդի ամբողջականության, հավատքի անսասնության եւ Եկեղեցու պայծառության համար:

Աշակերտները դպրոցից հեռացան վաղվա օրն ավելի լավ դարձնելու ոգեւորությամբ, հույսով եւ հավատով լեցուն, իսկ ուսուցիչները՝ այն հաստատ համոզմամբ, որ ստացած հոգեւոր բավարարվածությունը պետք է փոխանցել մատաղ սերունդին՝ նրանց մերձեցնելով Աստծուն եւ Հայ Առաքելական Սբ Եկեղեցուն:

Գոհար ՄԻՋՅԵՆՅԱՆ
Հրազդանի թիվ 7 միջնակարգ դպրոցի Հայ Եկեղեցու պատմության ուսուցչուհի



ու գեղեցիկը՝ նորին մեծություն գիտելիքը:

Իր գործունեության առաջին իսկ օրերից Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի թիվ 7 միջնակարգ դպրոցի տնօրեն տիկին Հասմիկ Ասատրյանը մեծ ուշադրություն է դարձնում աշակերտների հոգեւոր-մշակութային ճիշտ դաստիարակությանը:

Դրան են ուղղված հոգեւորականների եւ Մայր Աթոռ Սբ Էջմիածնի ԶԴԿ-ի Հրազդանի տարածաշրջանի պատասխանատու Ամժելա Ղլեյանի հետ հանդիպումներն ու հոգեւոր գրույցները:

Չնայած անձրեւային եղանակին՝ ապրիլի 30-ին դպրոցում տիրում էր ջերմ մթնոլորտ: Դպ-

կան սիրով ապրելու եւ կյանքում բարին գործելու հույժ կարեւորության մասին:

Նույն օրը դպրոց այցելեց նաեւ Մեղրաձորի Ս. Աստվածածին Եկեղեցու հոգեւոր հովիվ Հարություն քհն. Ծատուրյանը: Նա մանկավարժների եւ աշակերտների հետ անցկացրեց «Հարություն եւ կյանք» թեմայով հոգեւոր գրույց:

Զահանա հայրն իր պատգամն ուղղեց աշակերտությանը՝ հորդորելով շարունակել կերտել նորը, լավագույնը՝ դառնալով ազգի եւ հավատքի պահապան գինվորներ: Այնուհետեւ տեղ հայրը դպրոցում կատարեց կրթօջախի օրհնության կարգ: Նա

Հայոց Եկեղեցու պատմություն առարկայի հանրապետական օլիմպիադա



Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ ապրիլի 26-28-ը Մայր Աթոռ Սբ Էջմիածնի Գեւորգյան հոգեւոր ճեմարանում տեղի ունեցավ Հայոց Եկեղեցու պատմություն առարկայի օլիմպիադայի հանրապետական փուլը: Այն կազմակերպվել էր ՀՀ կրթության եւ գիտության նախարարության եւ Մայր Աթոռի քրիստոնեական դաստիարակության կենտրոնի կողմից:

Օլիմպիադայի հանձնաժողովին՝ նախագահությամբ ԶԴԿ տնօրեն Վարդան վրդ. Նավասարդյանի, անդամակցում էին ՀՀ ԿԳՆ, Կրթության ազգային ինստիտուտի, ԶԴԿ, Երեւանի պետական համալսարանի աստվածաբանության ֆակուլտետի մասնագետներ եւ Հայոց Եկեղեցու պատմություն առարկայի ուսուցիչներ:

2012-2013 ուսումնական տարում օլիմպիադայի դպրոցական, տարածաշրջանային եւ մարզային փուլերը հաղթահարեց ու հանրապետական փուլ ներկայացավ ՀՀ մարզերի եւ Երեւանի

հանրակրթական դպրոցների 8-12-րդ դասարանների շուրջ 106 աշակերտ:

Օլիմպիադայի ավարտից հետո մասնակից աշակերտները Մայր Աթոռի միաբանների առաջնորդությամբ միասնաբար աղոթեցին Մայր տաճարում, այցելեցին Մայր Աթոռի թանգարաններ:

Արդյունքներն ամփոփվեցին ապրիլի 28-ին Մայր Աթոռ Սբ Էջմիածնի հայորդյաց տանը տեղի ունեցած մրցանակաբաշխության հանդիսավոր միջոցառման ընթացքում:

Մրցանակները բաշխվեցին համապատասխանաբար. 1-ին կարգ՝ 4 աշակերտ, 2-րդ կարգ՝ 8 աշակերտ, 3-րդ կարգ՝ 16 աշակերտ, իսկ գովասանագրերի արժանացավ 26 աշակերտ: Առաջին կարգի մրցանակի արժանացան Գոռ Գալստյանը («Ֆոտոն») վարժարան, Շիրակի մարզ), Լուիզա Սարաֆյանը (Գյումրու թիվ 18 միջնակարգ դպրոց, Շիրակի մարզ), Տաթևիկ Սարգսյանը (Մեղրաձորի միջնակարգ դպրոց, Կոտայքի մարզ) եւ Դավիթ Գրիգորյանը (Խնձորեսկի միջնակարգ դպրոց, Սյունիքի մարզ):

Հայկական թեմաների մարմնավորումը Փիթեր Նաջարյանի երկերում

Սկիզբը՝ թիվ 8

Ինչպես սփյուռքահայ մյուս գրողների, այնպես էլ Փիթեր Նաջարյանի ուշադրության կիզակետում հայ ազգն է՝ իր տարաբնույթ խնդիրներով: Սակայն Նաջարյանի երկերը, ի տարբերություն Մայքլ Արլեն Կրտսերի «Ուղեւորություն դեպի Արարատ» եւ Փիթեր Բալաքյանի «Ճակատագրի սեւ շունը» վեպերի, չունեն տեղեկատվական բնույթ: Փոքր-ինչ հստակեցնենք, թե ի՞նչ նկատի ունենք՝ «տեղեկատվական բնույթ» ասելով: Եթե Արլեն Կրտսերն ու Բալաքյանը լրջագույն ուշադրություն են դարձնում հայոց պատմությանը եւ ցեղասպանության պատմական ասպեկտին, ապա Փիթեր Նաջարյանի ուշադրության կենտրոնում ոչ այնքան պատմական փաստերն են, որքան մարդկանց զգացմունքներն ու տրամադրությունները, նրանց հոգեբանությունն ու կենսափիլիսոփայությունը: Այս մոտեցումը գրական ստեղծագործությանը միանգամայն ճշմարտացի է, քանի որ ցանկացած ճշմարիտ գրող նախ եւ առաջ պետք է լինի հոգեբան եւ փիլիսոփա: Որպես ցայտուն օրինակ կարելի է բերել ամերիկահայ կարկառուն գրող Վիլյամ Սարոյանին, որը եւս մեծ ուշադրություն էր դարձնում մարդու հոգեկան աշխարհին եւ կյանքի փիլիսոփայական ասպեկտներին: Թերեւս, սրանք են Սարոյանի հաջողության գրավականները: Այժմ հարց է առաջանում. եթե Փիթեր Նաջարյանի եւ Վիլյամ Սարոյանի երկերի ուղղվածությունը որոշակիորեն նման է, ապա ինչո՞ւ Նաջարյանը չարժանացավ այն հաջակին, որին արժանացավ Սարոյանը: Բանն այն է, որ Վիլյամ Սարոյանի գրական գործունեությունը, նրա ընտրած թեմաները եւ մոտեցումները դուրս են գալիս նեղ ազգային սահմաններից, այդ իսկ պատճառով ընկալելի ու ընդունելի են տարբեր ազգությունների ընթերցողների համար: Նույն բանն ակնբերաբար դժվար է ասել Փիթեր Նաջարյանի մասին: Թեեւ Նաջարյանն անգլիագիր գրող է, սակայն նրա մտածելակերպն ակնհայտորեն հայկական է: Եվ սա այն դեպքում, որ նա ծնվել է մեծացել



Ե ԱՄՆ-ում: Նաջարյանն այնքան լավ է պատկերում ցեղասպանություն վերապրածների հոգեբանությունն ու հոգեվիճակները, որ ընթերցողը կարող է մտածել, թե նա անձամբ եղեռն ու գաղթ է տեսել: Հենց այստեղ է ի հայտ գալիս Նաջարյան գրողի տաղանդը: Ցանկացած շնորհալի արվեստագետ, օժտված լինելով գեղարվեստական վառ երեւակայությամբ, կարողանում է վարպետորեն վերարտադրել այն, ինչ ինքը լսել է ուրիշներից: Դրանում մենք համոզվում ենք Նաջարյանի «Հիշողության դուստրերը» վեպն ընթերցելիս: Սակայն նախ եւ առաջ առավել հանգամանակից լուսաբանենք «Ուղեւորություններ» վեպը, որն ավելի վաղ է ստեղծվել, քան «Հիշողության դուստրերը» երկը:

Սկզբնապես նշենք, որ «Ուղեւորություններ» վեպն ավելի շատ նման է ծավալուն արձակ պոեմի, որում ընթերցողը տեսնում է, թե ինչպես է հայազգի հերոսը փորձում քննդել անցյալի խճճված կոհիլը:

Ինչպես մյուս հայ հերոսները, «Ուղեւորություններ» վեպի հերոսը կանգնած է ամերիկյան եւ հայկական պատմությունների խաչմերուկում: Խառնվելու պատմության ժառանգորդ Արամ Թովմասյանը քննության է ենթարկում այն հարցը, թե ինչ-

պես են իր ազգի նախնիներն ապարդյուն իջել հայկական բարձրավանդակից, «որտեղ մի ժամանակ ուրարտացի աղջիկները սեր արեցին արմենների հետ» (տե՛ս P. Nadjarian, Voyages, New York: Pantheon, 1971, էջ 39): Հայ ժողովուրդը, դարեր շարունակ հալածվելով մեղեացիների, հույների, մոնղոլների եւ արաբների կողմից, ապաստան է գտնում օտար երկրներում: Նա լավ կան է ու ամոթահար (տե՛ս P. Nadjarian, նույն տեղում, էջ 39): Այսպիսին է տեսնում սփյուռքահայ գրողն իր ազգին:

Եթե «Արարատի ջրհորը» երկի երիտասարդ հերոսը խեղդվում է հին ու խստաբարո էթնոսի սահմանափակումներից, ապա «Ուղեւորություններ» վեպի շարադրողը շփոթված է դեմոկրատիայի իդեալի փուլզույնից:

Ուշագրավ է Փիթեր Նաջարյանի եւ նրա հերոսի վերաբերմունքը ԱՄՆ-ի նկատմամբ: Ամերիկահայ գրողի հավաստիացմամբ՝ Ամերիկան, գրկվելով իր առաձգականությունից, վաղաժամ ծերություն է ապրում: «Նրա դրամատները նման են եկեղեցիների, իսկ եկեղեցիները՝ դրամատների» (տե՛ս P. Nadjarian, Voyages, New York: Pantheon, 1971, էջ 16-17):

Ի՞նչ նկատի ունի ամերիկահայ գրողն իր այս արտահայտությամբ: Ըստ երեւութի՝ Նաջարյանն ուզում է ասել, որ իր երկրորդ հայրենիքում նյութական կյանքը գերակա է հոգեւոր կյանքի նկատմամբ, կամ՝ նյութական եւ հոգեւոր աշխարհների բաժանարար սահմանագծերը չբացել են, ինչն ակնհայտորեն զարմանք եւ հիասթափություն է առաջացնում: Նաջարյանի նմանօրինակ վերաբերմունքն ԱՄՆ-ի նկատմամբ միանգամայն հասկանալի է: Պետք է մոռանալ, որ նա արվեստագետ է, ուստի եւ նրա համար առաջնային է հոգեւոր-մշակութային կյանքը, իսկ Ամերիկան, շատ մտավորականների կարծիքով, նախ եւ առաջ նյութական արժեքների աշխարհ է, որի գոյության հիմքում ընկած է պրագմատիզմի փիլիսոփայությունը: Հետեւաբար, ոչ մի զարմանալի բան չկա նրանում, որ Նաջարյան գրողը չի կարողանում համակերպվել ամերիկյան իրա-

կանության հետ: Սակայն խնդիրը միայն հոգեւոր-մշակութային կյանքի եւ ոգեղենության պակասը չէ: Ամերիկահայ գրողը ներքուստ ընդվզում է այն ամենի դեմ, ինչն ամերիկյան է կոչվում՝ ամերիկյան հասարակություն, ամերիկացի ժողովուրդ, ամերիկյան բարքեր, սովորույթներ, հոգեբանություն, հոգեկերտվածք, արժեքներ եւ այլն: Որքան էլ տարօրինակ թվա, Նաջարյանը չի սիրում նաեւ այնպիսի մանրուքներ, ինչպիսիք են ամերիկյան սնունդն ու Նիստուկացը (տե՛ս P. Nadjarian, նույն տեղում, էջ 10-11, 16): Գրողը նմանապես չի կարողանում համակերպվել ամերիկյան կյանքի կանոնավորության հետ: «Ուղեւորություններ» վեպի դրվագներից մեկում նա գրում է հետեւյալը. «Այստեղ մարդիկ ծնվում են փաստաթղթով, ամուսնանում փաստաթղթով, ուսումնում ու խմում փաստաթղթով եւ նույնիսկ սիրահարվում փաստաթղթով» (տե՛ս P. Nadjarian, նույն տեղում, էջ 20): Դժվար է նկատել, որ ամերիկահայ գրողի խոսքերի մեջ կա որոշակի չափազանցություն, ինչը միանգամայն ընդունելի է գրական ստեղծագործության մեջ: Սակայն հարց է առաջանում, թե ինչի համար է Նաջարյանը դիմում գեղարվեստական արտահայտչության այդ միջոցին: Նա, պարզապես, չափազանցության միջոցով ուզում է առավել պատկերավոր ցույց տալ ընթերցողներին, որ ամերիկյան եւ հայկական մշակույթներն էապես տարբերվում են իրարից, ինչը բնականաբար շփոթության մեջ է զգում տարագիրների առաջին եւ երկրորդ սերունդներին պատկանող շատ ամերիկահայերի, ընդ որում՝ հենց իրեն՝ Փիթեր Նաջարյանին: Բանն այն է, որ հայերը դարեր շարունակ կողք կողքի ապրել են արեւելյան ժողովուրդների հետ, եւ բնականաբար նրանց հոգեբանությունն ու մտածելակերպը որոշակի փոփոխությունների են ենթարկվել. դարձել են ավելի արեւելյան: Իսկ ԱՄՆ-ի էթնիկական հիմքը, ինչպես հայտնի է, հիմնականում եվրոպական ազգերն են՝ անգլիացիներ, իռլանդացիներ, գերմանացիներ, ֆրանսիացիներ, իսպանացիներ եւ այլք: Ինքնին հասկանալի է, որ այլ աշխարհամասերից Ամերիկա գաղթածները չէին կարող միանգամից ընդունել ամերիկյան օրենքները, ամերիկացիների մտածելակերպը, նրանց բարքերն ու սովորույթները:

Շարունակությունը՝ էջ 7

ՀԱՅՈՑ ԿԱԹՈՒՐԻԿՈՍՆԵՐ

ՍԻՄԵՈՆ Ա ԵՐԵՎԱՆԴԻ (1763-1780)

Սկիզբը՝ էջ 3

Գրիգոր պատրիարքն իր պաշտոնավարության հենց սկզբում ստիպված եղավ բախվել Սիմեոն կաթողիկոսի հետ: Սիմեոնի կարծիքով՝ Կ. Պոլսի պատրիարքները պետք է ենթարկվեին Մայր Աթոռին, եւ Կ. Պոլսն առաջնորդությունից ավելին չէր: Նա Կ. Պոլսի պատրիարքներին մեղադրում էր այն բանում, որ նրանք սկսել են պետական հրամանով ստանձնել պատրիարքությունը եւ առանց Մայր Աթոռի հաստատման՝ պաշտոնավարել: Եվ քանի որ օսմանյան կառավարությունը նրանց պատրիկ էր անվանում, գռեհիկ հասարակությունը սովորություն դարձրեց նրանց պատրիարք կոչել: Ըստ որում, ոչ միայն նրանք ընդվզեցին, այլեւ վատ օրինակ տվեցին, որ մյուս վիճակներում էլ դեկավարներն սկսեցին իրենք իրենց առաջնորդ անվանել, եւ Օսմանյան տերության մեջ նրանք առնվեցին արքունի հրամանգրի ներքո՝ բացառությամբ մի քանի վիճակների՝ Չմյուռնիայի եւ Բաղդադի: Անշուշտ, Սիմեոնի մոտեցումն արդարացի կլիներ, եթե խոսքը վերաբերեր անցած ժամանակներին, սակայն շատ բան փոխվել էր, եւ հին կացությունը չէր համապատասխանում օսմանյան օրենքների ոգուն: Կ. Պոլսի տիրանալուց հետո օսմաններն ստիպված էին քրիստոնյաների կացությունը ճշտել օրենքի առաջ եւ դա կանոնագրել իս-

լամական օրենսդրությամբ: Լուծումը եղել էր ազգապետական գրության ստեղծումը, որով յուրաքանչյուր քրիստոնյա ազգության հոգեւոր պետը ճանաչվում էր այդ ազգության պատասխանատուն եւ կարգադրող՝ ներքին, կենցաղային եւ կրոնական կյանքում: Նման պայմաններում անհնար էր, որ դրսից օտար մի պետ իրավունք բանեցներ օսմաններին հպատակ որեւէ ազգության նկատմամբ: Կ. Պոլսի հայոց պատրիարքությունը հենց նման օրենսդրության ծնունդ էր, որի իրավասություններն աճել էին կայսրության ընդարձակման արդյունքում: Այդ ամենը քաջ հայտնի էր Կ. Պոլսում երկար ապրած Սիմեոն կաթողիկոսին, ուստի նա չպետք է պնդեր, թե Կ. Պոլսի առաջնորդը պատրիարք չէ, եւ հայտարարեր, թե պատրիարք են միայն Արտագի, Տաթեւի, Բջնիի եւ Հաղպատի առաջնորդները:

Սիմեոնը դրանով չբավարարվեց եւ թուրքահայերի հավանությունը եւ Նալյանի ձեռքով իր հրովարտակը ստանալուց հետո կամեցավ Կ. Պոլսի պատրիարքությունը վերածել սովորական առաջնորդության եւ կաթողիկոսությունը դարձնել Կ. Պոլսում ուղղակի գործող ու ազգությունը վարող իշխանություն: Այս առնչությամբ նա մտածեց Կ. Պոլսում, նվիրակից բացի, կաթողիկոսական փոխանորդ հաստատել: Նվիրակը պետք է հասույթներով ու



նվերներով զբաղվեր, իսկ փոխանորդը՝ կանգնել վարչության գլուխ՝ բարձրադաս դառնալով Կ. Պոլսի պատրիարքի նկատմամբ: Այս հարցում նրա հետ համամիտ էր եպիսկոպոս Աբրահամ Աստապատցին ու նաեւ աջակցեց նրան: Վերջինս ավարտել էր իր պաշտոնավարությունը Չմյուռնիայի առաջնորդությունում եւ պատրաստվում էր Կ. Պոլսով վերադառնալ Էջմիածին: Գալով Կ. Պոլսի՝ նա այդտեղից հեռանալ չէր կամենում, առավել եւս՝ մեկուսանալ Էջմիածնում: Նույնիսկ տեղեկություն կա այն մասին, որ կաթողիկոսական փոխանորդի հաստատման գաղափարը նա է տվել Սիմեոն Երեւանցուն, սակայն Մ. Օրմանյանն իրավացիորեն պնդում է, որ դա Սիմեոնի մտադրացումն էր եւ ոչ թե Աստապատցուն, քանի որ վերջի-

նիս առաջարկն առավելապես ելեմտական գործակալություն էր՝ Երուսաղեմի փոխանորդների նմանությամբ, իսկ կաթողիկոսը կամենում էր իշխանական ներկայացուցչություն հիմնել: Այսպես թե այնպես՝ երկուսի մտքերն իրար լրացնում էին: Սկզբում կաթողիկոսը հապաղեց, քանի որ սուլթանի հրովարտական ստացավ 1764 թվի փետրվարին եւ պատկառանք ուներ Նալյանի անձի նկատմամբ: Նա դրան ձեռնարկեց միայն Նալյանի մահից հետո՝ պաշտոնագրեր պատրաստելով ու Աբրահամին ուղարկելով: Չարմանալիորեն այդ գրությունների մասին ոչ մի հիշատակություն չկա կաթողիկոսի «Յիշատակարանում»: Գրիգոր պատրիարքը ժողով հրավիրելու պետք զգաց, իսկ Աստապատցին հետամուտ եղավ կողմնակիցներ ձեռք բերելու եւ հաջողություն ունեցավ պարսկահայ գավառներից գաղթած վաճառականների մեջ, սակայն բնիկ պոլսահայ ամիրաները եւ ժողովուրդը դրան ընդդիմացան՝ պատճառաբանելով, թե դրանից հետո երկու գլխավոր կլինի Կ. Պոլսում: Նրանց կարծիքով՝ պատրիարքը բավական էր Մայր Աթոռի իշխանությունը ներկայացնելու համար: Հրավիրված ժողովը որոշում էլ կայացրեց, բայց փոխանորդությունը չընդունեցին Աբրահամ Աստապատցուն պահանջեցին հոժարակամ մեկնել Էջմիածին՝ հայտարարելով, թե իրենք կաթողիկոսին պետք եղածը կգրեն: Պարսկահայ մեծավորները փորձեցին դրան հակառակել, սակայն մյուս խումբը պատրիարքին ստիպեց Աստապատցուն հեռացնել արքունի հրամանով, եւ նա հեռացավ 1764 թվի սեպտեմբերի 29-ին:

Շարունակելի

Բաբկեն ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀՀ ԳԱՍ թղթակից անդամ, պրոֆեսոր


ՀՐԱՏԱՐԱԿԿԵԼ Ե Մայր Աթոռ Սբ Էջմիածնում (2013 թ.)

Իոհան ավագերեց ՄԵՅԵՆԳՈՐՖ

ՆԵՐՎԾՈՒԹՅՈՒՆ ՀԱՅՐԱՊԵՏՈՍԱԿԱՆ ԿԱՏԱՎԾԱԲԱՆՈՒԹՅԱՆ

Թարգմանիչներ՝ Թ. Խաչատրյան, Բ. Բյուրքչյան

Իոհան ավագերեց Մեյենգորֆի «Ներածություն հայրախոսական աստվածաբանության» գրքի շարադրանքի հիմքը հեղինակի դասախոսություններն են՝ սղագրված իր իսկ ուսանողների կողմից՝ հայրաբանություն առարկայի շրջանակներում. այն ընդգրկում է առաքելական հայրերից մինչև միջնադարի բյուզանդական աստվածաբանության կարկառուն դեմքերի՝ Գրիգոր Պալամասի և Նիկողայոս Կավասիլայի (ԺԴ դար) ժամանակներն ընկած շրջանը: Նյութը հարուստ է ոչ միայն մեծագույն հայրերի ու վարդապետների մասին պատմող ներածական մասով, այլև բնագիր մեջբերումներով: Գիրքը նախատեսված է հոգևոր ճեմարանների, ԵՊՀ աստվածաբանության ֆակուլտետի ուսանողների և ընթերցողների լայն շրջանակի համար: Աշխատությունը տպագրվել է մեկնաստությամբ Մայր Աթոռի բարերար Գաբրիել Չեմբերճյանի: **Ձեզ ենք ներկայացնում մի հատված գրքից:**



ԱՌԱՐԵԼԱԿԱՆ ՀԱՅՐԵՐ

ՍԲ ԻԳՆԱՏԻՈՍ ԱՆՏԻՈՔԱՅԻ ԵՎ ՍԲ ՊՈԴԻԿԱՐՊՈՍ ՉՄՅՈՒՈՆԻԱՅԻ

Սովորաբար առաքելական հայրեր են անվանում սրբեր Կղմես Զոմմեացուն, Իգնատիոս Անտիոքացուն, Պողիկարպոս Չմյուռնիացուն և եւս մի քանիսին, ովքեր, ըստ ավանդության, Զրիստոսի հավատն ուսանել էին առաքյալներից և նրանց անմիջական ժառանգորդներն էին:

Սբ Իգնատիոս Անտիոքացու մասին (հայտնի է նաեւ Աստվածակիր անունով) մեզ հայտնի է Եվսեբիոս Կեսարացու (Դ դար) «Եկեղեցական պատմությունից»։ Իգնատիոսն Անտիոքի երկրորդ եպիսկոպոսն էր (Եվդոկիոսից հետո) և նահատակվել է Տրայանոս կայսեր իշխանության օրոք։ Համաձայն Եվսեբիոսի՝ նա ուղարկվել էր Հռոմ և կրկեսում հռոշտվել վայրի գազանների կողմից։ Մայրաքաղաք գնալու ճանապարհին Իգնատիոսը մի շարք ուղերձներ է գրում, որոնցում խրախուսում և մխիթարում է փոքրասիական քրիստոնեական համայնքներին։ Մեզ հասել է յոթ ուղերձ՝ ուղղված հռոմեացիներին, եփեսացիներին, մագնեզիացիներին, տրալլիացիներին, ֆիլադելֆիացիներին, զմյուռնիացիներին, և մեկ մասնավոր նամակ՝ ուղղված Պողիկարպոս Չմյուռնիացուն, ով հավաքել է այդ նամակներն ու հրատարակել։ Սբ Իգնատիոսի նամակները վաղքրիստոնեական շրջանի մասին վկայությունների արժեքավոր աղբյուր են, որի վերաբերյալ քիչ բան է մեզ հայտնի։

Կա բարեպաշտական մի լեգենդ, ըստ որի՝ երեխան, ում Զրիստոսը կանգնեցրեց իր աշակերտների մեջ՝ ասելով. «...թե չդառնաք ու չլինեք մանուկների նման, երկնքի արքայությունը չեք մտնի» (Մատթ. ԺԸ, 3), փոքրիկ Իգնատիոսն է եղել, սակայն ժամանակագրորեն հազիվ թե դա հնարավոր լիներ։ Սբ Հովհան Ոսկեբերանն իր հերթին վկայում է, որ Իգնատիոսը Տիրոջը մարմնով չի տեսել։

Հետաքրքիր է, որ Իգնատիոսի նամակներում քրիստոնեական համայնքը մատնանշելու համար գործածվում է *παροικία* (պարոյկե՝ ապրել որպես օտարական) բայը, որտեղից ծագում է *παροικία* (պարոյկիա) բառը, որ նշանակում է «կրկին անգամ» կամ «ժամանակավորապես գտնվել»։ Այսպես, «Ուղերձ հռոմեացիներին» վերնագիրը հունարեն բառացիորեն նշանակում է «Աստծու Եկեղեցուն, որ (ժամանակավորապես) գտնվում է Հռոմում»։ Այնուհետև *παροικία* բառը դարձավ եզր, որ նշանակում է որոշակի վայրում գտնվող «ծովա», այսինքն՝ եկեղեցական համայնք։ Դա միշտ միեւնույն Աստծու Եկեղեցին է՝ «ժամանակավորապես բնակվող» կամ «թափառող»՝ լինի Հռոմում, Անտիոքում, Նյու Յորքում, Տոկիոյում թե Մոսկվայում, քանի որ քրիստոնյաների ճշմարիտ «տունը», «մշտական բնակվելու վայրը» երկնային Երուսաղեմն է, որը երկիր կիցի ժամանակների վախճանին։

Սբ Իգնատիոսի ուղերձներում մեզ համար հատուկ հետաքրքրություն է ներկայացնում երկու փոխկապակցված թեմա՝

քրիստոսաբանությունը (ուսմունք Զրիստոսի մասին) և եկեղեցաբանությունը (ուսմունք եկեղեցու մասին)։ Պետք է նկատի ունենալ, որ վաղ եկեղեցու պատմության մեջ Իգնատիոսը ոչ հրեական ծագումով և ոչ հրեական միջավայրից սերած առաջին խոշոր քրիստոնյա հեղինակն էր, և նրա նամակներում հիմնականապես նրա հղումները բավական քիչ են։

Զրիստոսի մասին Իգնատիոսի ուսմունքը երանգավորված է *երեւութական հերետիկոսների* դեմ ուղղված բանավեճով, ովքեր ժխտում էին Աստծու մարմնավորման նյութական կողմը և Զրիստոսին համարում ինչ-որ անմարմին հրեշտակ։

Այդ պատճառով մի՛ լսեք, երբ ինչ-որ մեկը կասի ոչ այն Հիսուս Զրիստոսի մասին, Ով սերել է Դավթի տոհմից՝ Մարիամից, իրապես ծնվել, կերել և խմել է, իրապես դատապարտվել է Պոնտոս Պիդատոսի օրոք, իրապես խաչ է հանվել և մեռել... Ով իրապես հարություն է առել մեռելներից, քանզի Նրան հարություն է տվել Նրա Հայրը, Ով նույն կերպ հարություն կտա նաեւ մեզ՝ Հիսուս Զրիստոսին հավատացողներին, քանզի առանց Նրա մենք ճշմարիտ կյանք չունենք («Տրալիացիներին», 9)։

Սուրբ Իգնատիոսը, անշուշտ, մերժում է Զրիստոսի մարմնի նյութեղենության ստուգության վերաբերյալ ամեն տեսակի կասկած։ Այդ ստուգությունը, շոշափելիությունը, պատմականությունը մեր փրկության համար վճռորոշ նշանակություն ունեն, քանի որ եթե Զրիստոսի մարմնական պատկերը զուտ ամբողջությամբ լիներ (ինչպես պնդում էին երեւութականները), ապա մեր փրկությունն էլ կլիներ զուտ առեւտուր, այլ ոչ՝ իրական։

Աստվածաբանության առումով սուրբ Իգնատիոսը պատկանում է փոքրասիական ավանդությանը։ Եզրաբանությամբ նա ավելի մոտ է Հովհաննես Աստվածաբանին, քան Պողոս առաքյալին։ Պողոսն օգտագործում է *σώμα* (սոմա) «մարմին» բառը՝ դրական իմաստով, այն դեպքում, երբ *σάρξ* (սարկս) «մարմին» բառը նրա ուղերձներում բացասական երանգ ունի։ Սուրբ Հովհաննեսը «մարմնի» (*σάρξ*) մասին դրական է արտահայտվում։

Շարունակությունը՝ էջ 8



Սբ Գայանե վանքի շրջափակի արեւմտյան կողմում գտնվող գերեզմանատանը կա մի շիրմաքար, որն առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում։ Շուրջ 250-ամյա վաղեմության տապալաքարի վրա բավականին լավ պահպանված արձանագրությունը վկայում է, որ շիրմաքարի տակ հանգչում է 1790 թվականին վախճանված կույս Հռիփսիմե Աբեյանցի աճյունը։

«Տեր լուսաւորեսցէ գիոգի Դափանցի Աբէյանց բարեպաշտուհի Հռիփսիմէ կուսին որ առ ժամանակ ինչ ես ի սբ ուխտիս կրօնաւորեալ աստէն էառ զվախճան կենաց իւրոյ ի ՌՄԼԹ թուի», - կարդում ենք տապանաքարի վրա։

Հինավուրց գերեզմանատանն ամփոփված էւս մի կույսի՝ Թիֆլիսի Սբ Ստեփանոս կուսանաց անապատի մայրապետ

Հռիփսիմե Թահիրյանցի աճյունը։ Նրա մասին առիթ ունեցել ենք խոսելու թերթի էջերում («Զրիստոնյա Հայաստան», Օգոստոս Բ, թիվ 16, 2007 թ.)։ Խորհրդային կարգերի հաստատումից հետո, երբ արդեն փակ էր Թիֆլիսի նշանավոր կուսանոցը, Հռիփսիմե մայրապետը, գրկված լինելով որեւէ օթեանկից, իր իսկ խնդրանքով ապաստան էր գտել Սբ Էջմիածնում։ Այստեղ էլ, կնքելով իր մահկանացուն, Թահիրյանցը թաղվել է սբ Գայանե վանքում՝ եկեղեցու հյուսիսային դռան մոտ։

Հակառակ Հռիփսիմե Թահիրյանցի՝ կույս Հռիփսիմե Աբեյանցի մասին որեւէ բան հայտնի չէ։ Ինչ հանգամանքներում էր դափանցի կույսը հայտնվել սբ Գայանե վանքում, այսօր դժվար է ասել։ Սակայն կարելի է ենթադրել, որ նա եւս ունեցել է

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ՝ ՀՅՈՒՍՎԱԾ ԿՈՒՅՍ ՀՈՒԾՄԻՄԵ ԱԲԵԼՅԱՆՑԻ ԾԻՐՄԱՔԱՐԻ ՄՈՏ

Հռիփսիմե Թահիրյանցի ճակատագիրը։

Արդյո՞ք Հռիփսիմե Աբեյանցը Սյունիքի նշանավոր կուսանոցների վերջին կույսերից էր։ 17-րդ դարում Սյունյաց աշխարհում իրենց գրչուհիներով հայտնի Շենհերի և Հալիծորի կուսանաց անապատները 18-րդ դարի վերջերին այլեւս ավերակ էին։

Հալիծորի Կուսանաց անապատը գտնվել է Կապան քաղաքից հյուսիս-արեւմուտք։ 18-րդ դարի 20-ական թթ. սկզբներին Դավիթ-Բեկն այստեղ կառուցել է բերդ։ Այս մասին է վկայում նաեւ Դ. Ալիշանը. «Այլ առ աներկեւան ապահովութիւն՝ կառոյց Դաւիթ բերդ հզոր ի Հս. Մ. գեղջն՝ ի լանջս լերին, առ որով եւ Անապատ մի է Կուսանաց...»։ Ըստ Ալիշանի՝ այդ շրջանում Հալիծորի կուսանոցում բնակվում էր 40-50 կույս։ Սակայն Դավիթ-Բեկի վախճանից (1728 թ.) շատ չանցած, ինչպես գրում է Ալիշանը, «նոյնպէս ամայացաւ եւ Ս. Աստուածածին Անապատն Կուսանաց Հալիծորոյ...»։

Իսկ ահա Շենհերի կուսանաց անապատի ավերվածությունների մասին տեղեկանում ենք «Սիմեոն կաթողիկոսի Յիշատակարան»-ից։ Այստեղ հրապարակված է, այսպես կոչված, ժողովարարության մի թուղթ՝ 1767 թ. տրված Նարինգյուլ անվամբ կույսի։ Փաստաթղթում կարդում ենք. «Վասն Շնհեր կոչեցեալ Կուսանաց Անապատին, որ էր ի Դափանստան, որ ի հարուածոց Ֆաթալի խան պղծոյն (որ ի ՌՄԺԳ եւ ի փետր. ԻԴ ասացաւ)։ Կողոպտեցեալ էր յամենայն ընչից եւ աղքատացեալ»։



ված է, այսպես կոչված, ժողովարարության մի թուղթ՝ 1767 թ. տրված Նարինգյուլ անվամբ կույսի։ Փաստաթղթում կարդում ենք. «Վասն Շնհեր կոչեցեալ Կուսանաց Անապատին, որ էր ի Դափանստան, որ ի հարուածոց Ֆաթալի խան պղծոյն (որ ի ՌՄԺԳ եւ ի փետր. ԻԴ ասացաւ)։ Կողոպտեցեալ էր յամենայն ընչից եւ աղքատացեալ»։

Թերեւս, դափանցի կույս Հռիփսիմե Աբեյանցը հիշատակված ՌՄԺԳ կամ որ նույնն է՝ 1764 թվականին կողոպտված Շենհերի կուսանաց վանքի միանձնու-

հիներից է եղել, որ, ինչպես Հռիփսիմե Թահիրյանցը, նույնպես ապաստան էր գտել Մայր Աթոռ Էջմիածնում։ Կույսի շիրմաքարի առջեւ այս միտքն է հուշում տապանաքարի վրա դրոշմված բարեպաշտուհի կույսի վախճանման թվականը՝ ՌՄԼԹ (1790 թ.), ընդամենը 24 տարի անց կուսանոցի ավերման թվականից։ Արդյո՞ք շիրմաքարի մոտ հյուսված այս պատմությունն իրական է։ Այսօր արդեն հարցի պատասխանն անհնար է գտնել։

Հեղինակ՝ ՄԿՐՏՅԱՆ

ԱԹ-ԹԱՆԱՀԻ

Սկիզբը՝ էջ 4

Որոշ իմաստով աթ-թանահիի ժողովածուն խմբակային ստեղծագործություն է. յուրաքանչյուր գրույցի սկզբում հիշատակվում են անուններ, որոնք տվյալ գրույցը բերնեբերան հաղորդելով՝ հասցրել են գրառողին: Դրանք իրական երեւելի անձնավորություններ էին՝ իշխանավորներ, դատավորներ, պաշտոնյաներ, որոնց ընկերակցությամբ իր ազատ ժամանակն անցկացրել է աթ-թանահին, որ բարձր դասից էր, դադի՝ դատավոր: Վկայակոչելով «հեղինակակիցներին»՝ նա հաճախ շեշտում էր պատմածի իրական լինելը եւ մերժում հնարանքը, որ կարող էր վնասել պատմական-ազգագրական հավաստիությանը: Նա ժողովածուն կազմել է համոզված, որ գրի չառնվելով կարող են կորչել այդ գրույցները, որ պարունակում են բարոյական կարեւոր դասեր, իշխողներին կարող են հուշել՝ ինչպիսի սխալներից խուսափել, ինչպես կառավարել ժողովրդին: Այս ասելով՝ նա նկատում է. «Ես հասկացա, որ մեր թագավորներն ու կառավարողները ազնիվ բարքով նկատելիորեն զիջում են այն ականավոր մարդկանց, որոնց մասին պատմում են այս գրույցները»: Չիջման պատճառը բարոյական անկումն է, որ գնալով խորանում է. «Հասել եմ այն աստիճանին, որի մասին ավանդաբար ասվում է, թե ժամանակներն ավելի ու ավելի վատթարանալու են»: Նա գիտեր, որ իր ապրած դարը ոչ պակաս, գուցե ավելի, քան անցյալը, ունի տարակարգ տաղանդներ՝ գիտության ու ստեղծագործության ասպարեզում, միայն անցյալում կառավարողները կրթված մարդկանց

նկատմամբ մշտական ուշադրություն էին ցուցաբերում, «իսկ մեր օրերում նրանք ձեռնպահ են կրթվածությունը խրախուսելուց, այն մատնում են անուշադրության»:

Ըստ էության, սա բանավոր խոսք է՝ ասես թելադրված, եւ որ կարելու է՝ գեղարվեստական նպատակ չի հետապնդում: Դա՝ առաջին հայացքից. հարյուրավոր բանահյուսական նյութերը, նորավեպերը, գրույցները, անցնելով աթ-թանահիի ստեղծագործական բովոյ, ունեն միասնական թելադրություն ընթերցողին: Մանավանդ որ շատ բան գրի է առել տարիներ անց եւ մոռացած մանրամասները պիտի հարմարեցներ իր պատումի ընթացքին: Նա գրուցում է մեզ հետ եւ քարոզում իր իդեալները, առաջ տանում մարդասիրական իր հավատամքը:

Եվ չնայած հեղինակը սկզբունքորեն հրաժարվել է խորագրերից ու բաժիններից, այնուամենայնիվ նոր ժամանակներում նրա ժողովածուների հրատարակիչները, թարգմանիչները անհրաժեշտ են համարել ինչ-որ չափով մեղմել խնդիրը եւ դիմել են վերնագրերի օգնությանը, որոնք, հասկանալի է, պայմանական են, բայց անհրաժեշտ...

ԱԼ-ՄՈՒԹԱԳԻԳԻ ՄԱՍԻՆ

1.

Ահա թե ինձ ինչ պատմեց Աբու Մուհամմադ Յահյա իբն Մուհամմադ իբն Սուլայմանը՝ Աբու Ջաֆար իբն Յամդանի խոսքից, որ լսել էր Աբու Մուհամմադ Աբդալլահ իբն Ահմադ իբն Յամդանից:

Ես ալլահին երդվել էի, - ասաց վերջինս, - երբեք չպահեմ այն փողերը, որ կկրեմ, եւ ձեռքս ընկածն ամբողջապես ծախսել մոմի, գինու կամ երգչուհիների վրա: Եվ մի անգամ նարդի խաղալով ալ-Մութադդիի հետ՝ նրանից շահեցի 72.000 դիրհեմ: Այդ դրամն ինձ վճարելու հրաման տալուց առաջ ալ-Մութադդին անցավ հետմիջօրեի ազոթքի, սկսեց տեւական խոնարհումով, որ կլանել էր նրա ուշադրությունն ամբողջովին: Իսկ ես հետմիջօրեի ազոթքի սովորական ծեսը կատարեցի, նստեցի ու մտածումսն էի մեջ ընկա՝ զոջալով, որ երդվել էի, եւ ինքս ինձ ասում էի. «Ես որքա՞ն մոմ ու գինի պիտի գնեմ այդ 72.000 դիրհեմով եւ որքա՞ն երգչուհիների պիտի վճարեմ: Ինչո՞ւ այդպիսի հապճեպ երդում կերա: Եթե չերդվեի, այժմ կարող էի այդ դրամով կալված գնել: Իսկ այժմ երդվեցի բաժանվել իմ կանանցից, ազատ արձակել ստրուկներին եւ իմ ամբողջ ինչքը տալ բարեգործության, եթե այդ ամբողջ դրամը չծախսեմ»:

Բայց քանի ես իմ մտքերով էի, ալ-Մութադդին աննկատ հետեւում էր ինձ: Ավարտելով իր խոնարհումը՝ նա գոչեց. «Փա՛ռք ալլահին, - ապա դառնալով ինձ՝ հարցրեց, - Աբու Աբդալլահ, ի՞նչ ես մտածում»: «Ես լավ բան էի մտածում, տե՛ր իմ», - պատասխանեցի ես:

Նա երդվեցրեց իր կյանքով, որ ասեմ ճշմարտությունը, եւ ես արեցի:

Այնժամ նա ինձ հարցրեց. «Մի՞թե դու իրոք կարծես ես՝ ես մտադիր եմ այդ խաղի համար քեզ տալ 72.000 դիրհեմ»: «Իսկ դու, ի՞նչ է, ուզում էիր ինձ խաբե՞լ», - հարցրի ես: «Այո՛», - ասաց



նա, - ես քեզ խաբել եմ: Վեր կաց եւ այլեւս այդ մասին մի մտածիր»:

Նա անցավ աղոթքի: Իսկ ինձ ավելի մեծ վրդովմունք պատեց, քան առաջ, որովհետեւ զոջացի դրամի կորստյան համար եւ կշտամբում էի ինձ, որ նրան ճիշտն ասացի:

Աղոթքն ավարտելով՝ ալ-Մութադդիը նստեց եւ ինձ ասաց. «Աբու Աբդալլահ, երդվում եմ կյանքովս, ինձ ասա՝ հիմա ինչ ես մտածում»: Ինձ այլ բան չէր մտնում, քան խոստովանել:

Այնժամ նա ասաց. «Ինչ մտում է խաղի պարտքին՝ դա չես ստանա, ես քեզ խաբել եմ: Բայց ես քեզ կսվիրեմ այլ 72.000 դիրհեմ: Դրա համար մեղքի տակ չեմ լինի, իսկ դու կարող ես ընդունել՝ առանց խղճի խայթի: Այդպես դու կազատվես քո երդումից եւ կարող ես վերցնելով դրամը՝ դրանով օրինավոր կերպով կալված գնել»:

Ես համբուրեցի նրա ձեռքը, իսկ նա հրամայեց բերել դրամը եւ հանձնեց ինձ: Ես վերցրի ու դրանով կալվածներ գնեցի:

2.

Ղադի Աբդ ալ-Վահիդ ալ-Խաշիմի որդի Ղադի Աբու-ալ-Յասն Մուհամմադն ինձ պատմեց,

թե ինչպես գորապետներից մեկը վաճառականների ավագից պարտք վերցրեց մեծ գումար եւ հապաղում էր պարտքը վճարել: Ահա թե այդ մասին ինչ էր ասում վաճառական ինքը.

- Որոշեցի դիմել խալիֆ ալ-Մութադդին, որովհետեւ ամեն անգամ, երբ դիմում էի գորապետին, նրա տան դռները փակ էին, իսկ նրա ծառաներն ինձ անպատվում էին: Փորձեցի նրա հետ պայմանավորվել լավապես, դիմեցի միջնորդի: Դրանից ես բան դուրս չեկավ: Նույնիսկ դիմեցի Ուբեյդուլլահ իբն Սուլայմանին, բայց նա եւս ի գորու չեղավ օգնելու: Այնժամ բարեկամներիցս մեկն ասաց. «Ես քո դրամները կվերադարձնեմ, եւ հարկ չի լինի դիմելու խալիֆին: Արի հենց հիմա գնանք»:

Նրա հետ ես ճամփա ընկա, եւ նա ինձ տարավ աս-Սալաս շուկա՝ ծեր դերձակի մոտ, որ միշտ նստած՝ կար էր անում կամ Ղուրան կարդում մզկիթում: Բարեկամս նրան հայտնեց իմ պատմությունը եւ խնդրեց գնալ գորապետի մոտ, կարգավորել գործը:

Շարունակելի

Արշակ ՄԱՂՈՅԱՆ
Բանասիրական գիտ. դոկտոր



Սկիզբը՝ էջ 5

Տարբեր մշակույթների բախումից անխուսափելիորեն առաջանում է հոգեբանական կոնֆլիկտ, ինչի մասին էլ գրում է Փիթեր Նաջարյանն իր «Ուղեւորություններ» վեպում: Իսկ ո՞րն է ներկայացված կոնֆլիկտի հաղթահարման ուղին: Թերեւս, սխալված չենք լինի, եթե ասենք, որ միջմշակութային կոնֆլիկտի հաղթահարման միակ ուղին սերնդափոխությունն է: Դժվար թե Նաջարյանի սերունդը եւ առավել եւս դրա նախորդ սերունդը կարողանային ընդունել իրենց երկրորդ հայրենիքի կարգն ու կանոնը, հնաբնականների վարքն ու բարքը եւ դառնային ամերիկյան հասարակական ու մշակութային

կյանքի լիարժեք մաս: Լիարժեք սոցիալ-մշակութային ինտեգրացիան հնարավոր դարձավ սփյուռքահայերի միայն երրորդ եւ չորրորդ սերունդների համար:

Ներկայացնենք եւս մի քանի դրվագ «Ուղեւորություններ» վեպից, որոնցում կրկին անգամ երեւան է գալիս սփյուռքահայ գրողի վերաբերմունքը ԱՄՆ-ի նկատմամբ: Նաջարյանի կարծիքով՝ «ամերիկյան քաղաքներն անմեղ տեսք ունեն միայն հեռվից» (տե՛ս P. Najarian, նույն տեղում, էջ 22): Մոտ երեք դար ծառայելով իբրեւ երկրորդ հայրենիք տարբեր ազգերի համար՝ «այս Նոր Աշխարհը դարձել է քար, նրա կանաչները մամռակալել են, իսկ նրա ոսկրածուծը չորացել է» (տե՛ս P. Najarian,

Հայկական թեմաների մարմնավորումը Փիթեր Նաջարյանի երկերում

Նույն տեղում, էջ 46): Թեեւ որոշ հայտնի գրողներ պարծենում են, որ Ամերիկայում մշտապես արեւածագ է, բայց իրականում այստեղ ավելի շատ արեւամուտ կա, քան արեւածագ: Բոլոր հույսերը հօդս են ցնդում: Ամերիկահայ գրողի կարծիքով՝ ոչ ոք չի կարող հասնել մարդկային ներուժի լիակատար իրագործման այլընտրանքների այս երկրում, քանի որ «մարդկային կյանքն ու միտքը սահմանափակված են հորիզոններով: Չկա ազատ տեղ, չկա ոչ մի ելք» (տե՛ս P. Najarian, նույն տեղում, էջ 74): Փիթեր Նաջարյանը, մեղմ ասած, այնքան էլ հիացած չէ իր երկրորդ հայրենիքով: Եվ դա այն դեպքում, երբ այդ երկիրը՝ ԱՄՆ-ը, ապաստան էր տվել բազմահազար հայ գաղթականների, այսպիսով հնարավորություն էր ընձեռել, թեկուզ եւ օտար հողում ու օտար միջավայրում, վերածնունդ ապրելու եւ ստեղծելու հզոր Սփյուռք: Մի՞թե Փիթեր Նաջարյանն ի գորու չէ գիտակցելու այս պարզ ճշմարտությունը: Ի հակադրություն Նաջարյանի՝ ամերիկահայ գրող Լեւոն-Չավեն Սյուրմեյանը շատ լավ է հասկանում վերը նշվածը: Ասենք ավելին՝ նա ոչ միայն

դրական վերաբերմունք ունի Ամերիկայի ու տեղի ժողովրդի հանդեպ, այլեւ պատրաստակամ է հարկ եղած դեպքում կռվել եւ մեռնել հանուն այդ երկրի: Ահա այսքան մեծ է Սյուրմեյանի երախտագիտությունն այն երկրի նկատմամբ, որն ապաստան տվեց եղեռնից մազապուրծ փրկված հազարավոր հայերի: Մի՞թե Նաջարյանն ունակ չէ հասկանալու Սփյուռքի դրական դերն ու նշանակությունը: Մի՞թե նա պատկանում է այն հայրողիների թվին, ովքեր մշտապես բողոքում ու դժգոհում են ամեն բանից ու իրենց շրջապատող իրականության մեջ տեսնում միայն վատը եւ չեն նկատում կամ չեն ցանկանում նկատել լավը: Ամենայն հավանականությամբ՝ այո՛: Սակայն խնդիրը միայն որոշ հայերի, այդ թվում նաեւ Փիթեր Նաջարյանի նեգատիվիստական էության մեջ չէ: Իսկ միգրացե ամերիկահայ գրողի պնդումների մեջ կա ճշմարտության՝ թեկուզ մի փոքր հատիկ: Թերեւս, ողջամիտ կլինի եզրակացնել, որ Փիթեր Նաջարյանի տեսակետները մասամբ ճիշտ են եւ մասամբ չափազանցված: Թե՛ համաշխարհային պատմության ողջ

ընթացքը եւ թե՛ պարզ տրամաբանությունը հուշում են, որ չկան անթերի երկրներ, որտեղ ամեն բան ճիշտ է ու ներդաշնակ, եւ որտեղ կան բոլոր պայմանները՝ մարդ արարածի լիակատար երջանկության համար: Ամերիկյան այս առումով չի կարող բացառություն լինել: Բայց երբ մեկը միմիայն բացասական գնահատականներ է տալիս որեւէ երկրին կամ ազգին, ապա ակամայից մտածում եւս, որ խնդիրն այստեղ ոչ այնքան տվյալ երկրի կամ ազգի մեջ է, այլ՝ տվյալ անձի հոգեբանության ու հոգեվիճակի: Պետք չէ մոռանալ, որ Փիթեր Նաջարյանը ցեղասպանության զոհերի ժառանգ է, այսինքն՝ նրա հոգեկանն էլ այսպես թե այնպես խեղված է: Այստեղից էլ, թերեւս, բխում է Նաջարյանական նեգատիվիզմը, որը բավականին ակնհայտորեն դրսևորված է «Ուղեւորություններ» վեպում: Իսկ ինչ վերաբերում է այն մերժողականությանը՝ ամերիկյան մշակույթի հանդեպ, որը երեւան է գալիս նշված վեպում, ապա այն որոշ առումներով այնքան էլ արդարացված չէ:

Շարունակելի

Տիգրան ՄԱՂՈՒՅԱՆ
Բանասիրական գիտ. թեկնածու

